№ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1888

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 10

Նորին Կայսերական Մեծութիւն Օգոստափառ Թագաւոր Կայսր ԱՂԷՔՍԱՆԴՐ III (պատկեր)։
Նորին Կայսերական Մեծութիւն Կայսրուհի ՄԱՐԻԱ ՖԷՕԴՕՐՕՎՆԱ (պատ.)։
Ա. Մ. Ե. Պ.
Ա. Թագաժառանգն (ուղերձ) . . . . . .
Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ Մեծ Իշխան ՆԻԿՕԼԱՅ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՎԻՉ։
ՄԱԿԱՐ Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց։
Մ. Թ. Մուս.
Բարի Աստուծոյ Սաղերը . . . . . .
Ա. Մ. Ե. Պ.
Ղարսայ Փայտը (բանաստեղծութիւն) . . . . .
Թիֆլիս. Իշխանի Պալատը (պատկեր)։
Մելիք.
Պարծենկոտ լուսինը . . . . . .
Ա. Մ. Ե. Պ.
Նմանողութիւն (բանաստեղծութիւն) . . . . .
Խ. Մաւանկրզեանց.
Երեք ցանկութիւն (փոխադրութիւն) . . . . .
Թիֆլիս. Վօրոնցովի արձանը (պատկեր)

ԳԻՏՈՒԹԻՒՆ

Երկրիս և իր վերայ եղած արարածների մասին զրոյցներ. Ս. Ֆ. Բէդ-Նազարեան.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ձատ երդեցէք։ Պարտիզպանական փորձառութիւնք։ Կէտ ձկան խաղը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Ինքնօրինակ լրագիր։ Կրթուած կապիկներ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հանելուկներ։ Բեբուսի վճռողներ։ Բեբուս։ Նախընթաց №№-ի մէջ եղած Հանելուկի, խնդրի և բեբուսի բացատրութիւնները։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Նոցին Կայսերական Մեծութիւնների շնորհաբեր գալուստը։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ղ. Աղայեանց։
Սմայլս. Բնաւորութիւն . . . . . .
Թագաժառանգին «Աղբիւրի» մատուցած ընծան։
«Աղբիւրի» Գ. Պրէմիան։
Այրի Անոնա Մելիք-Յակոբեանի (Բաֆֆի ամուսնու) նամակը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկայ №-ի հետ ուղարկում ենք առանձին մանրամասն յայտարարութիւն և պատրաստած նամակներ ու ծրարներ. բաժանորդ գրուողին խնդրում ենք բացի իր մանրամասն հասցէից աւելի ոչինչ չըգրէ այդ նամակում։

Խնդրում ենք մեր բաժանորդներին «Աղբիւրը» տարածել իրանց շրջանում և ջանալ կրկնապատկել մեր բաժանորդների թիւը և այդ շատ հեշտ է, եթէ մեր ամեն մի բաժանորդ աշխատի ինքն էլ մի նոր բաժանորդ գտնել։

«ԱՂԲԻՒՐԻ» ՎԱՃԱՌԱՆՈՑ

Յատկապէս երեխաների, աշակերտների և ընտանիքների համար։ «Աղբիւրի» վաճառանոցում ծախվում են մանկական գրքեր, պատկերներ, նկարներ, նօտաներ, բազմատեսակ շքեղ իրեղէններ երեխաներին և աշակերտներին ընծայելու համար. դպրոցական և դասական հարուստ և բազմատեսակ պլիտոյքներ. տպվում են նոյն վաճառանոցում մօնօգրամներ (զարդարուն գլխատառեր նամակների ճակատներին). գրելու, փոստի և ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ամեն տեսակ ընտիր ԹՂԹԻ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ, որ կազմում է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՐԴՈՒՆԻՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ՀՈՒՉԱԿԱՒՈՐ ԹՂԹԻ ԴՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ։

Վաճառանոցը ընդունում է Ռուսաստանում և արտասահմանում հրատարակուող մանկական թերթերի բաժանորդագրութիւն։

Վաճառանոցը կամենալով դիւրացնել գաւառաբնակ հեղինակների, թարգմանիչների դործը, ընդունում է Թիֆլիսում տպագրել տալու նրանց աշխատութիւնները։ Ընդունում է միջնորդ լինել և պատուիրել նրանց համար ամեն տեսակ պատկերներ, կլիշաներ։ Վարձու է տալիս «Աղբիւրի» ծաղկատառերից և նկարներից։—Վաճառանոցն ընդունում է կօմիսիայով ծախելու դանազան հրատարակութիւններ։ Վաճառանոցում զետեղուած է և «Աղբիւրի» խմբագրութեան դրասենեակը։

Վաճառանոցը յանձն է առնում գաւառական և դիւղական ուսումնարանների համար կազմել դրադարաններ, քիմիական լաբօրատօրիաներ, ֆիզիկական կաբինետներ, մանկական խաղեր և դպրոցական ու մանկական հասակի վերաբերեալ պարագաներ։

Վաճառանոցն ունի իւր սեպհական կազմարանը, պատրաստում է պատկերների համար ամեն տեսակ և դնանոց շրջանակներ։ Պատուէրները կատարվում են ճշտութեամբ և անյապաղ։

Օտար քաղաքներից դիմում են՝ Тифлисъ. Магазинъ Дѣтскаго журнала „Агбюръ“. Իսկ հեռագրով՝ Тифлисъ, „Агбюръ“.

ԲԱՑՈՒԱԾ Է ԱՌԱՋԻԿԱՅ 1889 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՆԸ

„ԱՂԲԻՒՐ"

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Կրհրատարակուի նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ։ Եթէ առաջիկայ 1889 թուականին «ԱՂԲԻՒՐԻ» բաժանորդների թիւը հասնէ 3000-ի, Բ. ՄԱՍԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՆՈՅՆ ՉԱՓՈՎ, ՈՐՔԱՆ Ա. ՄԱՍՆ Է։

ԱՌԱՋԻՆ ՊՐԷՄԻԱՆ Է ՄԻ ԳԵՂԵՑԻԿ ՕԼԻՕԳՐԱՖԻԱ

ԱՐՇԱԼՈՅՍ

ԱՆՑԵԱԼ ՏԱՐՈՒԱՅ ՊՐԷՄԻԱՅԻ ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ՄԵԾՈՒԹԵԱՄԲ.

Ստացուած են արդէն 3000 օրինակ, բաժանորդ գրուողը հէնց իսկոյն կըստանայ Ա. պրէմիան, որ թէ Թիֆլիսում և թէ հայաբնակ քաղաքներում մեր գործակալների մօտ դրուած են ի ցոյց հասարակութեան։

Բ. պրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջաղեանի «ԱՐԱՐԱՏ» մեծադիր պատկերը (աւելի մեծ քան «Աղթամարայ ծովակը») վիճակ կըգցուի մեր բաժանորդների մէջ սեպտեմբեր ամսին։ «ԱՐԱՐԱՏ» տանող բաժանորդը եթէ կամենայ՝ կարող է նրա փոխարէն ստանալ 100 ր.։

Գ. պրէմիան՝ ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ 1890 թուականի, կուղարկուի բաժանորդներին դեկտեմբերի №-ի հետ։

Բացի դրանցից՝ տարուայ ընթացքում կառաջարկուին հանելուկներ եւ ռեբուսներ, որոնց ԱՌԱՋԻՆ վճռողները կըստանան մ ր ց ա ն ա կ ն ե ր—գրքեր, պատկերներ, ալբոմներ, դրասենեակի զարդեր եւայլն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքիաթներ, Ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։ II) Բանաստեղծութիւններ։ III) Գիտութիւն և արուեստ։ IV) Նոր լուրեր։ V) Այլևայլք։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, ֆրեոբէլեան, շախմատ և այլ խաղեր։ Բեբուսներ, թուաբանական խնդիրներ։ Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ։ VII) Երգեր՝ ձայնագրած (նոտաներով)։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։ IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ։ X) Մատենախօսութիւն և նոր գրքեր։ XI) Խառն լուրեր։ XII) Պատասխաններ. Յայտարարութիւններ։

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը 3 ր. է, պրէմիաների ծրարի համար պէտք է ուղարկել 4 հատ 7 կ. մարկաներ։

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՐԻՑ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction de la Revue «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Дозволено цензурою. 3 Октября 1888 г. Тифлисъ.
Типог. И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

ԹԻՖԼԻԶ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, № 1|2
1888

ՆՈՐԻՆ ԿՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ՕԳՈՍՏԱՓԱՌ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐ

ԱՂԷՔՍԱՆԴՐ III

ՆՈՐԻՆ՝ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆ ԿԱՅՍՐՈՒՀԻ

ՄԱՐԻԱ ՖԵՕԴՕՐՕՎՆԱ

ԱՌ ԹԱԳԱՓԱՌԱՆԴՆ

ի 28 Սեպտեմբերի

Բարեաւ, բարեաւ ի մեր աշխարհ
Եկիր Վեհին Դու պայազատ.
Ամենեքին գլուխ ի խոնարհ՝
Տան Քեզ ողջոյն ի սէր առատ։

Ո՛վ մեծազօր իշխանութեան
Վաղուեան Արեգ յուսապայծառ,
Ողջո՛յն, ողջոյն արշալուսիդ
Պաղթեն Պասիք հազար-հազար։

Լեռն ալեւոր, որի աչկունք
Յաւերժական իւր գագաթէն
Վրկանք նկատեն ու Պոնտեան ափունք,
Շրջեալ այժմ ի Քեզ նայէ՛ն։

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ՄԵԾ ԻԶԽԱՆ

ՆԻԿՈԼԱՅ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՎԻՉ

Տուր, օն, շողքդ սառնարանին,
Թող արձակուին կապեալ լեզուք.
Կարկաչաձայն սահեալ հոսին
Վէտ-վէտ ալեօք ցնծուն առուք։

Եւ անդ ի Հովիտս
Այրարատ երկրին՝
Հաշտ հետ ձիթենուն
Պիտ՝ տեսնես դափնին,
Քրտամբ մշակին
Ուռոդեալ յաճումն,
Վեհի ճակատիդ
Ի պսակ ոլորուն։

Բարեաւ, բարեաւ ի մեր աշխարհ
Եկիր Վեհին Դու պայծառատ,
Ոսկի ամաց Քեզ փայլուն շար
Մաղթէ Հայկեանս Այրարատ։

Ա. Մ. Է. Պ.

ԹԻՖԼԻՍ, 1888.

Մ Ա Կ Ա Ր Ա·

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ



ԲԱՐԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԱԳԵՐԸ



եր գիւղի տէրը մի տղայ ունէր։ Երեխան այնքան չար էր, ծոյլ էր և կամակոր, որ ոչ մի կերպով ուղղել չէին կարողանում, ուստի նրան յանձնեցին քահանային, որ նա փորձէ մեղմացնել և ուղղել։

—Ես ոչինչ չեմ կամենում շինել, ասում էր երեխան, ես ազնուական եմ. ազնուականը ոչինչ չի շինում. տեսէք իմ հօրս։

Քահանան նրան բացատրում էր, թէ նրա հայրը ուլանի գնդապետ է եղել, թէ գնդապետ լինելուց առաջ պէտք է մայոր, հարիւրապետ, տասնապետ և դեռ զինուորական ուսումնարանում աշակերտ լինել, և թէ աշակերտ լինելու համար պէտք է գիրք կարդալ և իր անունը գրել իմանալ, պէտք է զինավարժութիւն անել և այսպէս շատ ու շատ լաւ-լաւ բաներ գիտենալ։

—Ի՞հ լա՛ւ, ասաց երեխան, ես կամենում եմ բարի Աստուած լինել։ Բարի աստուածը ոչինչ չի անում։

Քահանան ձեռքերը դէպի երկինք բարձրացրեց.

—Գոնէ մտածիր, իմ երեխայ, ասաց նա, որ Աստուած կառավարում է ամբողջ աշխարհը: Այն ձեռքը, որ արեգակին է պտտեցնում, մրջիւնին էլ ուղեկցում է նրա նեղ շաւղի վրայ: Նրա հայեացքը ընդգրկում է միաժամանակ ամբողջ տիեզերքը և այն ամենափոքր միտքը, որ յղանում է մարդուս սրտի մէջ: Նա լսում է երկնքից ներդաշնակութիւնը և խոտի աճման ձայնը: Աստուած երբէք չիհանգստանում:

Բայց երեխան կամակոր էր: Նա այնպէս վճռական կերպիւ բարի Աստուած լինել էր կամենում, որ մերժեց քնել, եթէ նրան աշխարհի տէրը չդարձնեն: Թէ սպառնալիքներ և թէ աղաչանքներ, ամենն ի զուր անցան, մինչև որ տէրտէրակինը չար երեխային մի անկիւն տանելով խոստացաւ որ նա միւս օրը բարի Աստուած կըլինի:

Այս համոզմամբ նա անկողին մտաւ: Գիշերը, որ խաղաղութիւն է բերում, չըփոխեց մանկան մտածմունքները, և զարթելիս նրա առաջին հարցը եղաւ, թէ ինքն Աստուա՞ծ է արդեօք:

—Այո՛, ասաց տէրտէրակինը. բայց այսօր կիւրակի է, ժամերգութեան ժամանակ է, իսկ բարի Աստուածը չէ կարող այնտեղից բացակայ լինել:

Նրանք ճանապարհ ընկան դէպի տաճարը:

Ճանապարհին անցան մի մարգագետին, որ գիւղատերոջն էր պատկանում: Թռչունների արածացնող աղջիկը այստեղ էր արածեցնում դղեակի սագերը:

Երբ որ այս աղջիկը ժամերգութիւն լսելու գնացող գիւղացոց տեսաւ, վազեց նրանց հետ միանալու:

—Վառվառ, մի՞թէ դու սագերին մենա՞կ ես թողնում, գոչեց երեխան:

—Մի՞թէ կիւրակի օրը սագերին արածեցնո՞ւմ են, պատասխանեց Վառվառը, այսօր տօն է:

—Ուրեմն ո՞վ պիտի նրանց վրայ հոգայ, հարցրեց երեխան։

—Կիւրակի օրը բարի Աստուածն է նրանց արածեցնում, իմ սիրելի պարոն, սրանք բարի Աստուծոյ սագերն են, ասաց և առաջացաւ։

—Իմ երեխայ, ասաց տէրտէրակինը, դու հօ լսեցիր Վառվառի խօսքերը։ Մեծ ուրախութեամբ քեզ եկեղեցի կըտանէի, որ երգեհոնի ածելը լսես, բայց որովհետև այս սագերին կարող է մի դժբախտութիւն պատահել և բարի Աստուածը դու ես, ուրեմն դու էլ պիտի նրանց արածացնես։

Ի՞նչ կարող էր պատասխանել իմ փոքրիկ ազնուականը։ Դէմքի վրայ մի ծամածռութիւն արեց և վազեց սագերին արածացնելու։

Երեկոյին տուն վերադառնալով, նա խոստացաւ որ այլ ևս չի ստիպիլ, որ իրան բարի Աստուած շինեն։

Նա լաւացաւ, ուղղուեցաւ և հասկացաւ, որ ամեն մարդ այս աշխարհում պիտի աշխատէ։

Մ. Թ. Մուս.

ՂԱՐՍԱՅ ԹԱՅՐԸ

Լեռնոստի կողքում ցրցուած էր մի ժայռ՝
Աւերիչ ուժը կրծքում թագուցած.
Դարերից ի վեր այն բարձրում նըստած՝
Նայում էր, նայում էր, նայում էր դէպ վայր։

Իւր գլխին վերև ամպրոպք անդադար
Եւ հողմունք երկրի մարտ էին մղում,
Եւ արծիւն այնտեղ իւր թևը բախում.
Բայց նա նայում էր, նայում էր դէպ վայր։

Իրնից ըստորև, իրնից շատ խոնարհ,
Խեղճ աշխատաւորն ունէր աղքատ տուն,
Կար և տուն ուսման, և աղօթատուն.
Եւ նա նայում էր, նայում էր դէպ վայր։

Անուշիկ մայրըն անդրանիկ մանկան
Կաթըն էր տալիս. առընթեր նորան,
Միջօրէ ժամին, հանգչում էր այրը.
Իսկ նա նայում էր, նայում էր,—ժայռը։

Յանկարծ ցընցուելով գետինը գոռաց,
Օդը փոշիով լի էր, խեղդուած.
Դղրդուեց տունն ուսման, և աղօթատուն,
Եւ արդէն չըկար տընակ խեղճ Հայուն։

Անցան ըոպէներ, օդը յիստակուեց,
Վախեցած մարդիկ յետ ուշքի եկան՝
Վերուցին աչքեր, լեռնոստն երևեց.
Այլ ժայռն իր տեղում նոքա չըտեսան։

Ահա նա գետնին փըռուած՝ յաղթ մարմնով,
Կարծես հըրճուում է դառն երգիծանքով՝
Որ իւր ուժի տակ խեղդեց ծընողքին,
Հողմոց նըշաւակ պահելով ձագին։ *

Ա. Մ. Ե. Պ.

* 1884 Թուականի ապրիլ ամսի 3-ին Ղարսայ բերդի բարձրիցը մի ժայռ է պոկ դալիս եւ յառաջ է բերում սոյն ոտանաւորում պատմուած աղէտը։

ԹԻՖԼԻՍ. ԻՋԽԱՆԻ ՊԱՂԱՏԸ.

ՊԱՐԾԵՆԿՈՏ ԼՈՒՍԻՆԸ

Ա.

Երեք մօր գիրկն էր մտել. մութը սար ու ձոր, դաշտ ու ծով կոխել, սեւացրել նրանց փայլուն, սիրուն տեսքը. լռել էր բնութիւնը առ վայրկեան: Հարթ-հաւասար, մուգ-կապոյտ, լայնատարած ծովի վրայ կանգնած էր լուռ ու մունջ գարնան մեղմ զեփիւռը. այդ խորհրդաւոր պահուն էր, որ կապոյտ ծովի չորս ծայրերի վճիտ յատակից դուրս ելան չորս պարկեշտասուն կոյս աղջկունք: Նրանք չորս հարազատ քոյրեր էին իրար նման՝ ձիւնի պէս ճերմակ էր նրանց մարմինը. մարմարից կտրած էր նրանց հասակը. սև սաթի պէս ալիքանման խոպոպիքները փափլիկ, սպիտակ, կոլորիկ, հոլանի զոյգ ստինքներն էր աջ ու ձախ կողմից նուրբ ստուերարկում, իսկ գանգուրների մեղմ հոսանքը փղոսկրեայ կռնակներին էր անփոյթ թափթափած. կիսով չափ էր ծածկում նրանց լուսափթիթ մարմինները թափանցիկ սփածանելին: Նրանք պաղ, յրստակ կաթնանման ջուրը չոմփ-չոմփ երեսներովը տուին և մի-մի վարդ փռուեցաւ նրանց այտերին:

Չորսն էլ լուռ կանգնած էին. վերջապէս աւագ քոյրը ձեռքը վեր բարձրացրեց. խորհրդաւոր էր նրա նշանը, քոյրերը իրանց Համեստ, առաքինի հայեացքը դարձրին դէպի արևելք և սպասում էին նրա հրամանին: «ժամ է, սիրելի քոյրեր, օն յառաջ լողալու, մեր Մայր Թագուհու մահճակալը իր սրսկապանից վեր հանելու, խաւարապատ աշխարհը լոյսի է կարօտ». ասաց ու փռուեցաւ անշարժ հայելու վրայ. նրա օրինակին հետևեցին և իր քոյրերը:

Բ.

Լողում էին չորս քոյրերը դէպի յառաջ, լողում էին դէպի ծովի կենդրոնը, մուգ-կապոյտ Հայելին երերվում էր և կռնակների վրայ փռուած գանգուր գլխակները մեղմ ալիքների հետ ներդաշնակ պար բռնած պարում էին։ Նրանք բախումով էին ընթանում միասին, երբ դուրս էին հանում լուսազարդ հոլանի կռները, դրանց յաջորդում էր սփածանելիով ծածանուած քնքոյշ ոտերը. ցայտում էր ջուրը աջ ու ձախ, մարգարիտ ու ադամանդ էր թափթփվում ակօսած ճանապարհներին։

Հասան իրանց նպատակին, ծովի մէջտեղն էին. չորս գլուխները կլոր շրջան էր կազմում, վեր բարձրացան, վարսերը յարդարեցին և գլխի վայր ներս սուղուեցան ծովի յատակը—իրանց սիրելի Թագուհու ննջարանը։

Գ.

Լոյս, լոյս, լոյս, լուսաւորութիւն». չորս Հարազատները անուշիկ ձայնով գեղգեղում և ուսերի վրայ ակնածութեամբ վեր էին բարձրացնում Մայր Թագուհու մահճակալը։ Մի ակնթարթ—մուգ-կապոյտ Հայելին ծիրանի փոխուեցաւ՝ երևեցաւ Թագուհու շառագոյն քողապատ մահճակալը։ Չորս գլուխները չորս անկիւններում շառագունած խոնարհել էին և սպասում էին նրա զարթնելուն։

Գարնան սիւգը ծովափնեայ բուրաստանների բուրմունքով համակուած՝ ոլոր-մոլոր, մեղմիկ, դողդոջ մակերևոյթի վրայ խաղալով՝ ակնածութեամբ ինկարկեց լուսաճաճանչ Թագուհուն։ «Ի՞նչ անուշահոտ է անմահական դրբախտի բուրմունքը». ասաց և բացաւ նշաձև, լուսալիր, նախշուն աչերը, նստելով տեղը. կապոյտ ծովը գօտևորեց ծիրանաձայր ծոպերով նրա նուրբ ու քնքոյշ մէջքը։

Լուացուելու պատրաստութիւն են տեսնում. կրտսեր քոյրը փղոսկրեայ հրաշալի բանուածքով կոնքը ձեռին, խոնարհ դէմքով կանգնեցաւ Մայր Թագուհու առաջ. երրորդ քոյրը՝ բուրաստանների ծաղկունքներից հաւաքած անարատ ցողով լեփ-լեցուն մարգարտայեռ, ոսկեայ ջրկճի բերանը խոնարհեց Թագուհու մարմարեայ ձեռքերին. լուացուեցաւ: Երկրորդը կարապի ընբուլից պատրաստած փափուկ երեսբիչով սրբեց նրա ձեռքն ու երեսը: Աւագ քոյրը՝ աւագ նաժիշտը գիսախուիլ գլուխն է սանրում կիտոսկրի սանրով. ոսկեվարսեց, խոպոպեց կուրծքն ի վայր թափթփեց, գանգրեց և կռնակն ի վայր թողեց անփոյթ իջնելու:

—«Պատրաստ էք, ով Մայր Թագուհի, ելէք ծովից և լուսաւորեցէք խաւարապատ աշխարհը. ձայն տուաւ աւագ նաժիշտը:

—Պատրաստ եմ, ասում ես. հայելու մէջ տեսնում եմ գիսախուիլ մազերս գանգրած միայն. մթթէ իմ զարդն ու զարդարանքը միայն իմ ոսկէ վարսն է կազմում. նայէր, իմ կամար յօնքերը քեզ պէս վարպետ նաժշտի ծարիրին են կարօտ, իմ ճերմակ-ճերմակ այտերը սնդուրի:

—Պատրաստ եմ կատարելու ձեր հրամանը, ասաց և սկսեց բնատուր տաղանդը փայլեցնել. դեղերեսած ձիւն այտերի վրայ նկարչուհու վրձինը մայիսուայ նորաբաց ցողաթաթախ վարդեր կենդանագրեց և քնքոյշ, փոքրիկ բերանին մի կիսաբաց վարդ. ծարիր քաշեց յօնքերին և բնական նախշուն յօնքերը աւելի դեղեցկացան և նրանց տակ հրալիր աչքերը կարծես աւելի փայլ ստացան: Թագուհին ուրախ էր. հայելուց պոկ չէր գալիս, զմայլեցաւ իր նաժշտի ի վերուստ ներշնչեալ նկարչական տաղանդով: «Վարդեր, ճիշդ վարդեր է ստեղծել քո ճարտար ձեռքը, բէր, մօտեցուր մի համբուրեմ այդ քո ձեռքը. եթէ ինձ իրաւամբ անուանում ես Թագուհիների մայր, ես էլ քեզ

այսուհետև կանուանեմ նկարչուհիների մայր». ասելով վրձինը բռնած ձեռքը համբուրեց։

Դ.

Հուսափառ Մայր Թագուհին ծիրանին հագած ուռած-ուռած, սիգաճեմ վեր-վեր բարձրացաւ, նաժիշտները չորս շուրջ պար առած։ Բայց նա կարծես աւելի շտապ է սլանում երկնակամարի անհուն տարածութեան վրայ և ասես երկար չի ցանկանում մնալ իր գեղեցիկ հագուստում. մի՞թէ նա էլ աշխարհի նորաձևութեան է հետևում, նա էլ գիտէ՞ զուգուել փափկասուն օրիորդների նման և իրան ցոյց տալ ուրիշներին։ Նա հանդարտ աչք ու յօնքով իմաց արաւ իր քղանցը բռնող նաժիշտներին. նրանք հասկացան. կրտսերը դէպի ծովն շտապեց և բերաւ աղի տակից նոր դուրս եկած ժապաւէններով ու երիզներով զարդարած ձիւնափայլ հագուստը։ Հանեցին ծիրանին և քնքնոյշ մատիկների ծայրով հագցրին նուրբ թափանցիկ շրջազգեստը և ճանապարհ մաղթելով՝ դէպի ծովը սլացին։

Ե.

Ինչ գեղեցիկ է Թագուհու հագուստը, կարծես վերան է բուսած, կաթ է նրա երեսկահատը, ձիւն է նրա հանդերձը։ Նա մէկ հագուստին էր նայում, մէկ ծովի մէջ իր պատկերը տեսնում շտկում ու դրստում իր վարսը։ Գոհ իր զարդարանքից ու դէմքից վերջապէս երբ չորս բոլորը աչեց, յանկարծ աչքերը կրակեցին, ճակատը վեր պարզեց, հպարտացաւ, առաջուանից աւելի գեղեցկութեան վրայ գեղեցկութիւն եկաւ և խրոխտ բացագանչեց. «Ես եմ գիշերուայ Թագուհին, ես եմ միակ լուսաւորիչը համա-

տարած աշխարհի, ի՞նչ վառք ու պատիւ, ի՞նչ փափագ»։ Այսպէս զոռոզաբար երբ դէս-դէն էր նայում, յանկարծ կարծես մի բան գտած, ձեռը ճակտին տարաւ և հեգնական ժպիտով բերանը բացաւ. «Ո՞ւր է, ո՞ւր է, ծոյլ արեգակը, ո՞ր անկիւնն է մտել, թող գուրս գայ տեսնէ ի՞նչ անեզը, անծայր աշխարհ՞եմ լուսաւորում և ոչ թէ փախած մի պուճախ մրափում։ Տէ՛ռ, տէ՛ռ, հա՛, հա՛, հա՛. նրանց աստղերին մտիկ տուէք, այս ու այնտեղ ինչպէս ցան ուցրիւ ծպիլ-ծպիլ են անում, ա՛յ դուք անշնորհքներ, կարծում էք դուք էլ լոյս էք տալիս հա այնտեղ ցածում հոդածիններին, դուք եղած չեղած՝ աշխարհի համար մի և նոյն է։ Չեմ իմանում թէ ինչո՞ւ այդպէս կոյր են նրանք. զարմա՛նք. մի՞թէ ինձ չեն տեսնում և ինչո՞ւ չեն քաշվում գոնէ արեգակի նման մի անկիւն իրանց սև օրը սգում»։ Այսպէս ամբարահաւաճ գիշերուայ թագուհին գլուխը տընկած առաջ ընթացաւ. նա խոչընդոտ չունէր, լայն ու արձակ էր ճանապարհը, երկինքը ջինջ էր, աստղերը հետզհետէ պլպլացող տեսքով կարծես բսնում էին ամենուրէք կապուտակի վրայ. յարդդողի ճանապարհը, ինչպէս չորացած՝ գետի հուն ընկած էր երկնակամարի մի ծայրից միւսը։

Զ.

Ասում է արեգակը հեռու հեռու երկնակամարի մի կողմում, լսում են և աստղերը խումբ-խումբ այս ու այնտեղ. քթի տակն է ծիծաղում օրուայ թագաւորը, կարծես չեն լսում, զրոյց են անում իրար մօտ հաւաքուած աստղերը։ Բայց մի սուր ձայն՝ ականջ ծակող՝ բոլորի ուշք ու միտքը դէպի իրան հրաւիրեց. «Ո՞ւր է, ասում է նա, ո՞ւր է թէ մեր թագուհու պէս մէկը լինի, մի նայեցէք նրա կլոր լուսաւոր դէմքին, և տեսէք ի՞նչ դեղեցիկ ու հրապուրիչ է. մի՞թէ նրան կարելի է արեգակի հետ համե-

մատել, փորձեցէք նայել նրա չար դաժան դէմքին, նա կրծակծկէ իսկոյն իր սուր-սուր պողվատիկ ատրաշէկ նետերով, հապա մի նայեցէք որա կաթնանման երեսին, կարծես ամեն նայողին՝ հարստին ու աղքատին, մեծին ու փոքրին՝ ծիծաղում, բարև է տալիս և...»։

«Լռիր, անպիտան, լռիր քծնող կատու, փակէք այդ յիմարի կաշառուած բերանը, պատիւը կարծես հացի հետ է կերել». այս ու այն տեղից կարկտի պէս վրայ թափուեցան այդ խմբի աստղերը և պապանձացրին տեղն ու տեղը իբրև լռելեայն. բայց որտեղ. Սրականջ աստղը լսեց և ահա իմաց է տալիս իր ընկերներին.

— Բա չէք ասիլ—այնտեղ ցածը մի ուրիշ բանի վրայ են։

—Ի՞նչ է ասում, ի՞նչ կայ ասացիր ցածում, միտքս վրաս չէր. հարցրեց Խլականջ աստղը։

—Չի՞ս իմանում, բա չես լսում ինչպէս աղաղակ են բարձրացրել, թակ ու մհակ կայ. իրանց հացն ուտում, ուրիշի վրայ են մտածում։

—Է՛հ, դու էլ սար ու խուրթով կրգցես լսօքը, ասա տեսնենք ի՞նչ կայ։

—Մի՞թէ չլսեցիր ի՞նչ ասացի, կռիւ կայ այն էլ մեծ կռիւ, տեսնենք ի՞նչպէս կրվերջանայ. լուսնին դովում պախարակում են. միտդ է մի քիչ առաջ ինչպէս էր նա կոկուած նորահարսի պէս գնում, մեզ վրայ ծիծաղում, ծաղր անում և արեգակին մրափող անուանում։

—Է՛հ օրհնած, դու էլ որ այդ սուր ականջի տէրն ես՝ դարդերդ դլխիցդ անպակաս կրլինին. ի՞նչ կայ, թող մի քիչ էլ նա պարծենայ, մի քիչ էլ նա ծիծաղի մեզ վրայ, հօ նրա ասածին պէս չդարձանք։

Սրականջը ուսերը վեր-վեր քաշեց, բարկացած հեռացաւ այդ տեղից դէպի ուրիշ խումբ, ասաց, պատմեց ինչ որ իր սուր ականջները լսել էին. բայց նրանք ևս ուշք

չդարձրին, շուտով դադարեցրին խօսակցութիւնը։ Մեր խելօքը կոյր ու փոշման մի երրորդ խմբի էլ մօտեցաւ, բայց դարձեալ նոյն անյաջող ելքն ունեցաւ. նա բարկութիւնից ուզում էր պատռուի. «Տեսէք, ասում էր նա, տեսէք որքան կոյր, որքան անպատիւ, օհ ծերեր, ես ձեզ ինչ ասեմ, որ սիրտս Հպնգստանայ. ասես թէ այնքան անպատուութիւնն ու վիրաւորանքը իրանց չլինի ուղղած լուսինը իր յիմար տեղովը. բանը սա է, որ դեռ գտնվում է մէկը որ գովում էլ է նրան. անմիտ»։ Էլ բարկութիւնից ոչինչ չկարաց խօսել և իր տեղը Հանդիստ նստել. մէկ նայում էր Հպարտ լուսնին, որ դեռ Հեգնական ժըպիտը բերանից չէր Հեռացրել, մէկ իր ընկերակից աստղերին, որ անվրդով իրանց պատուական զրոյցն էին շարունակում։

Է.

Լիշերուայ թագուհին թարմ, կապուտակ երկնակամարի գագաթնակէտին Հասաւ. մի շունչ քաշեց, գլուխը այս ու այն կողմը դարձրեց և եկած ճանապարհը սկսեց նայել. «Ո՜հ, որքա՜ն երկար ճանապարհ, բայց ինչպէ՞ս շուտով եկայ, Հասայ. կարծես ընաւ ճանապարհ չեմ եկած, յոգնածութիւն ասածը չգիտեմ, դեռ սրա Հարիւր չափ էլ կըգնամ և դադրածութեան նշոյլ անգամ չեմ ցոյց տալ. մի՞թէ արեգակի նման եմ, որ մի քիչ տեղ գնամ, յոգնեմ ու ոտերս պարզեմ, Հանգստանամ, Հա՜, Հա՜, Հա՜, ի՞նչ եմ ասում, մի՞թէ արժէ նրա մասին խօսել։ Այս ամենաբարձր կէտն է, ահա բոլորքեանք էլ ինձ են նայում, այնտեղ Հողածիններն զմայլած իմ տեսքով. տես, տես, նրանք աղաչում են ինձ մնալ այստեղ, բայց չէ, ես ծոյլ չեմ, կը գնամ, իմ պարտականութիւնս կրկատարեմ»։

Ը.

Հոլորքեանք լսում են լուսնի այդ Հպարտութեամբ լի խօսքերը, բայց ոչ ոք էլ բանի տեղ չի դնում, միայն դարձեալ Սրականջն էր որ պատուվում էր, մորթուց ուզում էր դուրս գալ, ականջի մէկը ցցած դէպի լուսինը, սկսեց մտածել. շատ մտածեց, մտածեց, շատ որոգայթներ, դարաններ սարքեց, բայց վերջը բոլորն էլ անկարելի տեսաւ: Վերջապէս մատը յանկարծ ճակտին տարաւ, նայեց արեգակին. «Հա, գտայ», ասելով՝ նետի պէս մի ակնթարթում հեռու հեռու երկնակամարի միւս կողմը—դէպի արեգակը սլացաւ:

Թ.

Դրուայ թագաւորը հասկացաւ նրա փորի ցաւը, իր խոշոր աչքերով բոլորը տեսել, իմացել էր. լուռ կանգնած հիւրին ան-ել դրութիւնից հանելու համար դարձաւ. «Բարի լինի, այսպէս անժամանակ ի՞նչ բանի համար շնորհ բերիք:

—Բարի չեղած՝ բա ի՞նչ պիտի լինի. չմեղադրէք ինձ, ես մի բանի համար եմ եկել, անմիտ լուսինն է պատճառը, որ ձեզ պիտի ձանձրացնեմ իմ գանգատով. էլ ես ինչ ասեմ, դուք լաւ տեսած կըլինիք, թէ ինչպէս նա էլ հայհոյանք չմնաց որ չթափէ մեզ և գլխաւորապէս ձեզ վրայ: Անտանելի է ինձ համար այնպիսի յիմարի վիրաւորանքները, ինչպէս և ամեն մի հասկացողի համար. նա մեզ վիրաւորում, թքում է մեր երեսին, մենք ոչինչ չենք ասում և դեռ կան այնպիսիները, որ գովում էլ են նրան: Էլ ինչ ասեմ, բաւական չէ մի ցաւը, մի ուրիշն էլ մի տեղիցն է բռնում. էհ, եկայ ձեզ մօտ, որ գոնէ դուք լինիք, իմ ցաւիս մի դարման անէք»:

Արեգակը մտքումը ծիծաղում էր Սրականջի վրայ, բայց ինչպէս հեռացնէր գլխից, նրա հայեացքը պատասխան էր ուզում։ «Մի՛ ուշանար, գնա՛, շուտով կրհանգստանաս. դու դեռ երիտասարդ ես, աշխարհից անտեղակ». այս եղաւ Արեգակի պատասխանը։

Ժ.

Տեր, զառամեալ ճերմակ գլուխներով աստղերը խօսում ասում էին և երբեմն ծիծաղում Սրականջի վրայ։

—Տեսէք ուր գնաց, ասաց Խլականջը, չի հանգստանում տեղը, որքան անփորձ է և խակ. չէի ճանաչում դրրան. դեռ աշխարհի գաղտնիքները մի վարագուրով ծածկուած են նրանից. խե՜ղճ, ինչպէ՞ս կատաղել, ինչպէ՞ս փրփրել է։

—Մի՛ մեղադրիր, եղբայր, մէջ մտաւ Արագավազը. մենք էլ մեր երիտասարդ ժամանակն այդպէս անփորձ էինք. տաք գլուխ երիտասարդը շուտով ուզում է լուսնին պատժուած տեսնել. նա համբերել չգիտէ։

—Ես բնաւ չեմ զարմանում, ասաց Անշարժը։

—Թէ այսպէս թէ այնպէս՝ նա շատ տաքգլուխ է ձեռք ու գլխով իմաց արաւ Մունջը։

—Սո՛ւս, լռեցէք, բաւական է, հրէն գալիս է Արեգակի մօտից. շատ հետաքրքրական է, թէ Արեգակը ի՞նչ է պատասխանել, ասաց Հետաքրքիրը։

—Ի՞նչ պիտի ասած լինի, չես իմանում, հասկանալի է, պատասխանեց Արագավազը։

—Հասկացայ, բաւական է. ահա մօտեցաւ, նրա ականջներից վախեցէք։

ԺԱ.

Լուսինը՝ ինչպէս արծաթէ հալուած՝ մերթ վառուող, մերթ հանգչող աստղերի արանքով հոսում էր դէպի ցած։ Լուութիւնը կատարեալ էր. աստղերը դադրել էին զրոյց անելուց, գլուխները խոնարհած ննջում էին։ Բայց չանցաւ փոքր ժամանակ, բոլորեքեանք էլ ցնցուած վեր տնկեցին գլուխները և մի բանի էին դիտում։ Սրականջը չէր հասկանում նրանց միտքը, թէև ինքն էլ հետևեց նրանց օրինակին։

«Հա՛, իմ ասածի պէս պիտի լինի, լուութիւնն ընդհատեց Սրատեսը։

Հասկացան բոլորեքեանք նրա միտքը, միայն էլի անփորձ Սրականջն էր, որ չէր հասկանում, բայց և հարցնել չէր ցանկանում։

«Տեսէք, մատն ուղղեց Սրատեսը, ահա կլոր մարմինը գալիս է, լուսնի դիմացը պիտի կտրի։

— Այո՛, ճիշդ է քո դիտողութիւնը, ամենքն էլ միաբերան պատասխանեցին։

ԺԲ։

Բոլորեքեանք՝ ծեր, երիտասարդ անքթիթ նայում էին լուսնին և համրում էին վայրկեանները։ «Մի ակնթարթ՝ և լուսնին պատժուած կըտեսնես». մտածում էր ամեն ոք։ Եւ յիրաւի, անցաւ մի ակնթարթ և ամենայն ինչ փոխուեցաւ. լուսնի փայլուն ճակատը, կաթնանման երեսը, աննման քիթն ու պռունկը, նախշուն աչքերը խորշոմներով ու մրով ծածկուեցան. մի վայրկեան էլ —ամբողջ մարմինն էլ մութը պատեց, մոյգ կարմիր գոյն ստացաւ։

ԺԳ.

«Ահ, այս ինչ դրութիւն է, կորչէի, չքանալի տիեզերքի վրայից, աւելի լաւ չէր», խոր յոգոց հանելով ասաց լուսինը քիթը կախ։ Նա յիշում էր մօտ անցեալի փառքը և տեսնում էր ներկայ վիճակը, սիրտը կտրատում էր, աղիքը գալարում, քթից ծուխ բարձրանում։

«Անմիտ արարած, շտապեց դատավճիռը տալ Սրականջը, որ նոր թէ հասկացել էր իր ընկեր աստղերի միտքը և արեգակի պատասխանը, էլ չէս լուսաւորում, մեծաբան, անունդ դրած Թագուհի. ուր փախան ճերմակ-ճերմակ հանդերձներդ ասղնագործած, ինչու թռաւ երեսիդ փայլը, ուր է ոսկեհիւս ծամերդ, էլ խրոխտ հրաման չես արձակում նաժիշտներիդ հանդերձներդ փոխելու. չասես սգաւոր եմ, աւաղ բաղդը — Արեգակը շուռ տուաւ իր աչքերը քեզնից. երկիրը եղաւ պատճառ, թէ չար ոգինները իրանց կախարդութեամբ այդ օրին հասցրին քեզ. ողորմելի՜ ինչ էիր երազում և ինչի. . . .

—«Որդեակ, հիմա հանգստացար, մօտ կանչեցին Սրատեսին խօսքը կտրելով իր խմբի ծեր աստղերը, հասկացար մեր լուութիւնը և մեր անվրդով հոգին. դու դեռ երիտասարդ ես և այդպէս փորձով պիտի իմանաս մեր աշխարհի գաղտնիքները։

ՄԵԼԻՔ

Բաղու.

ԵՄԱԵՈՂՋՈՒԹԻՒՆ

(ԼԷՕՓՈՐԴԻ)

Հեռի բնիկ քո ոստէն,
Խղճուկ տերև դու նրկուն,
Ո՞ւր ես գընում։—Կաղնիէն,
Այն՝ ուր ծընայ, անջատեց
Քամին ինձի։ Պտոյտքով,
Նա պուրակէն ինձ լ։ պաշտ,
Զորէն ի սար սաստկաբար
Հալածելով վարում է։
Իւր հետ անվերջ գընում եմ
Պանդխտական, այդ գիտեմ։
Գընում եմ, ուր այն ամէն,
Ուր գընում է ի հարկէ
Տերևիկրն վարդենի
Եւ տերևը սարդենու։

Ա. Մ. Ե. Գ.

ԵՐԵՔ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ

(Փոխադրութիւն)

՞Ինչ բան է բախտը, հացրեց փոքրիկ Զարուհին իր տատին։

Տատը՝ որ մի խելացի ու փորձուած պառաւ էր, շփոթուեցաւ իր թոռան անակնկալ հարցից։

—Ճշմարիտ որ ի՞նչ բան է բախտը, մտածեց նա։ Մէկը կարծում է թէ բախտաւորութիւնը հարստութեան մէջն է, միւսը կարծում է թէ պատուի մէջն է. տեսնում ես երրորդը հարուստ էլ է, մեծ անուն էլ ունի, բայց դարձեալ ուրախ չէ ապրում ու ա՞խ քաշելով կրկնում է, որ Աստուած բախտ չի տալիս իրան։

—Տատի ջան, դէ ասա ի՞նչ բան է բախտը, ստիպում էր Զարուհին պառաւին։

—Բախտը մի չալ թռչնիկ է, ասաց տատը գլուխը պրծացնելու համար։ Նա ունի զանազան դոյնի, գեղեցիկ, փոքրիկ փետուրներ...։ Մարդիկ ընկնում են այդ թռչնիկի ետևից և հէնց որ հանդիպում են՝ խլոյն սկսում են մի մի փետուր պոկել՝ որը կանաչ, որը վարդագոյն, որն էլ կապոյտ...։

—Իսկ դու, տատի, որևիցէ փետուր պոկա՞ծ ես նրանից։

Պառաւը՝ որ իր կեանքի մէջ շատ վշտեր էր կրած, թաքուն կերպով հառաչեց։

—Պոկած եմ, կամաց ասաց նա, մի սև փետուր... պոչից...:

—Ուրեմն ո՞վ է աշխարհիս մէջ ամենքից բախտաւոր մարդը, շարունակում էր իր հարցուփորձը Զարուհին:

Այն մարդն է ամենից բախտաւորը, պատասխանեց տատը, ով որ ոչ մի բանի ետևից չի ընկնում, ոչինչ չի ցանկանում, այլ բաւականանում է Աստուծոյ տուածից:

—Ի՞նչ ես ասում, տատի, ոչինչ չըցանկալ անկարելի է, ասաց Զարուհին տարակուսած. դու ինքդ էլ երբեմն այս բանն ես ցանկանում, երբեմն այն բանը:

Տատը դարձեալ շփոթուեցաւ և մտածեց թէ ինչպէս երբեմն փոքրիկ երեխան կարողանում է շփոթել ծեր մարդուն:

—Լսի՛ր, սիրելի՛ս, ես կը պատմեմ քեզ թէ ինչ է յառաջանում այդ ցանկութիւններից, ասաց պառաւը և հնարք մտածեց պատմութիւնով զբաղեցնել իր թոռանը:

—Ո՜հ, պատմի՛ր, ուրախանալով ասաց Զարուհին և աւելի մօտ նստեց տատին:

«Մի անգամ, սկսեց պառաւը, իրիկնադէմին՝ գիւղ մտաւ մի ալևոր ծերունի, որ տեղ խնդրէ գիշերն անցկացնելու: Գիւղի մի ծայրին գտնվում էր մի հարուստ տուն, իսկ միւս ծայրին՝ աղքատիկ, կիսափուլ մի խրճիթ: Ծերունին մօտեցաւ հարուստ տանը և թոյլտուութիւն խնդրեց գիշերելու:

—Այստեղ իջևան չէ, գոռաց տանտէրը, հեռացի՛ր այստեղից: Ձեզ պէս անտուն թափառականներ շատ են թրև գալիս, ասաց տանտիկինը չարացած: Բոլորիդ էլ որ տեղ տանք՝ մեզ ինքներիս տեղ չի մնալ»: Ծերունին առանց մի խօսք ասելու՝ դանդաղ քայլերով գնաց դէպի աղքատիկ խրճիթը: Այնտեղ տանտէրը սիրով ընդունեց նրան, նրա հետ միասին ընթրիք արաւ, ինչ որ Աստուած տուել էր և պառկեցրեց հիւրին իր աղքատիկ անկողնի

մէջ՝ իսկ ինքը պառկեց յատակի վրայ։ Առաւօտը վաղ արթնացաւ, նայում է... ինչ է տեսնում. նրա տունը մի նոր, ընդարձակ տուն է դառել, խոշոր պատուհաններով և պատշգամբով. մնաց հիացած ու սկսեց ծերունուց շնորհակալ լինել։ Իսկ ծերունին նրան ասում է. «Ինձ պէս քաղցած ու յոգնած մարդուն տեղ տուիր, եղբօր պէս բաժանեցիր ինձ հետ վերջին կտոր հացդ. ես էլ ուրեմն միայն քո լաւութեան փոխարէն լաւութիւն արի։ Այժմ ինդրիր ինչ որ ուզում ես. երեք ցանկութիւն կարող եմ կատարել»։

Մտածեց—մտածեց մեր գեղջուկը և ասաց ծերին. ոչինչ հարկաւոր չէ ինձ, հոգիս։ Ես ազնիւ աշխատանքով եմ ձեռք բերում իմ հացը, ոչ ոքին չեմ նախանձում, ոչ ոքին վնաս չեմ տալիս, ուրեմն երջանիկ եմ։ Կէս դար ապրելուց յետոյ, ինչ պէտք է ցանկայ ինձ պէս մի մենակ մարդը։—«Ուրեմն, դու համեստ մարդ ես, ասաց նրան ծերունին. որ մեռնես՝ արքայութեան արժանի կը լինիս»։

Ու գնաց իր ճանապարհը։ Բայց դեռ մի վերստ էլ չէր հեռացել, որ նրա ետևից հասաւ այն հարուստ գիւղացին՝ որ նրան տեղ չէր տուել գիշերն անցկացնելու։—«Տեսայ, ասում է նա, թէ ինչպէս դու խեղճ Յովհաննէսի համար լաւ տուն էիր շինել և շատ ղղջացի, որ մեղաւոր էի մնացել քո դէմ։ Արի քէն մի՛ պահիր, մէկ այդպիսի տուն էլ ինձ համար շինիր»։—«Քեզ համար տուն չեմ շինիլ, պատասխանեց ծերը, բայց թող այդպէս լինի, երեք ցանկութիւն կրկատարեմ. ցանկացիր ինչ որ ուզում ես»։ Ուրախացաւ մեր նախանձոտ գիւղացին ու շնորհակալ եղաւ ծերունուց. իսկ ինքն սկսեց դէն քշել մոծակներին, որ սաստիկ խայթում էին նրան այդ տաք կէսօրին։

—Քիչ է մնում կուլ տամ անիծածներին, ասաց նա։ Մէկ էլ տեսնես, մոծակները ամբողջ խմբով թռչում են

նրա բերանը և նա հէնց կուլ է տալիս։ «Հայրիկ ջան, աղաչեց նա ծերունուն, դէն քշիր մոծակներին... բոլորովին խեղդեցին»։ Մոծակներն իսկոյն հեռացան գիւղացուց։ «Կայծակը զարնէ դրանց, զոչեց նա բարկացած։ ԹըրՀկ... կայծակը խփեց և մոծակներին ամբողջապէս սպանեց տեղնիտեղը։ «Հազիւ թէ պրծանք, ուրախացաւ գիւղացին։ Լա՛ւ, այժմ կասեմ թէ ինչ եմ ցանկանում...։

—Էլ բան չըկայ քեզ ցանկալու, պատասխանեց ծերունին։ Ցանկացար մոծակներին կուլ տալ՝ կուլ տուիր, ցանկացար որ հեռանան՝ հեռացան. ցանկացար որ կայծակը խփէ նրանց ու սպանէ՝ սպանեց. ամբողջ երեք ցանկութիւններդ էլ միանգամից կատարուեցան։

Ազահ գիւղացին սկսեց բարձրաձայն ողբալ, իսկ ալեւոր ծերունին կամաց-կամաց շարունակեց իր ճանապարհը։

Խ. ՄԱՌԱՆԿՈՉԵԱՆՑ



ԹԻՖԼԻՍ. ՎՈՐՈՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԸ.

ԵՐԿՐԻՍ ԵՒ ԻՐ ՎՐԱՅ ԵՂԱԾ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԶՐՈՅՑՆԵՐ

Թէ դուք հասկացաք, թէ ինչ բան է հաւասարասրունք եռանկիւնին, թէ ինչպէս պէտք է գետնի վրայ չափած անկիւնը փոխադրիչով վերցնել և մակարդակի վրայ դնել, թէ ինչպէս պէտք է թղթի վրայ կազմած եռանկիւնու գագաթից ուղիղ գիծ թողնել մեզ յայտնի կողմի վրայ, որ կըլինի եռանկեան հիմնագիծը կամ խարիսխը, և այն, ապա հասկանում կըլինիք հիմա թէ ինչպէս են շինում մակարդակը նոյն իսկ այնպիսի տեղերում ևս, ուր հասնել չեն կարողանում անմատչելի լինելու համար։ Այս էլ ասեմ ձեզ, որ եթէ դետը շատ լայն է և միւս կողմը հասարակ աչքով տեսնել չկարողանաք, պէտք է հեռաւորութիւնը ցոյց տուող գործիք ունենաք.—հեռադէս։ Հեռադիտով նայած ժամանակ նոյնը պէտք է անէք, ինչ որ պարզ աչքով նայում էիք։

Դիցուք մեզ հարկաւոր է գիտենալ մեր եկեղեցու բարձրութիւնը. ինչպէս չափենք այդ։ Դիցուք եկեղեցւոյ արևելեան պատը, մի ծայրից մինչև միւս ծայրը, հաւասար է 10 սաժէնի. ուրեմն մէջ տեղը գտնելու համար մի ծայրից կըչափենք 5 սաժէն. նոյնը կանենք և արևմտեան պատի կէսը գտնելու համար։ Այդ գտած կէտերից եթէ մտքով մի գիծ անցկացնենք, կանցնի եկեղեցու կենդրոնի միջից։ Հիմա գտած կէտերից չա-

փենք այնքան արշին կամ սաժէն տարածութիւն, որի ծայրից եթէ նայելու լինինք եկեղեցու խաչի ծայրին, երևայ մեզ։ Այդ-տեղից քանոնի օգնութիւնով կազմենք 45°-ի մի անկիւն. մի և նոյնն անենք և դիմացի պատի կողմից։ Դիցուք թէ պատից սկսած մինչև մեր կանգնած կէտը չափել ենք և գտել, որ հաւասար է 5 սաժէնի. ուրեմն երկու կողմի չափը կըլինի 10 սաժէն։ Այս 10 սաժէնի վրայ աւելացնենք հիւսիսային կամ հարաւային պատի ամբողջ գումարը. այսպիսով կըստանանք արևելեան և արմտեան երկու կէտերի մէջ տեղը գտնուած ամբողջ տարածութիւնը. թող այդ ամբողջ տարածութիւնը հաւասար լինի 20 սաժէնի. ուրեմն եռանկեան հիմնագիծը պէտք է լինի 20 սաժէն. կամ եթէ ամեն մի 10 սաժէնի համար



Նկ. 7.

վեր առնենք կէս վերշոկ, թղթի վրայ կըքաշենք մի եռանկիւնի, որի յատկագիծը կամ խարիսխը պիտի լինի մի վերշոկ։ Կազմելով այդ հիմնագծի վրայ, այսինքն երկոքին ծայրերի վրայ 45°-ի երկու անկիւններ, գծերը կըշարունակենք. դրանք կըկտրեն մի տեղ, և ահա այդ կտրած տեղի անկիւնը կիսելով, մի ուղիղ գիծ կըքաշենք կիսած տեղից հիմքի վրայ. դա կըլինի եռանկեան բարձրութիւնը, որ է և եկեղեցու բարձրութիւնը։ Այդ գիծը կչափենք մի և նոյն չափով, որով հիմնագիծն ենք չափել և դուրս կը գայ որ ճիշդ հիմնագծի կէսն է, այսինքն կըլինի կէս վերշոկ կամ 10 սաժէն. ուրեմն եկեղեցու բարձրութիւնը 10 սաժէն է։

Ի նկատի ունեցէք, որ եթէ ձեր կազմած եռանկեան հիմնագծի երկու ծայրերի վրայ կազմած անկիւնները 45°-ից աւելի կամ պակաս լինին, այն ժամանակ չէք կարող գտնել նրա բարձրութեան չափը մեր այս ցոյց տրուած եղանակով. պէտք է ուրիշ եղանակ գիտենաք չափելու, որի մասին մենք ոչինչ չենք ասում։

Դուք այժմ տեսնում էք, որ կարելի է չափել եկեղեցու բարձրութիւնը, առանց բարձրանալու նրա վրայ։ Այդ եղանակով կարելի է չափել նաև ծառերի բարձրութիւնը, սարերինը, երկն-

քում կանգնած մի ամպի բարձրութիւն, նոյն իսկ լուսնի, արեգակի, աստղերի բարձրութիւնը։ Այժմ տեսնում էք, որ անկարելի չէ իմանալ թէ լուսինը, արեգակը և ամեն մի աստղ մեզանից քանի՞ վերստ կամ մղոն հեռաւորութիւն ունի։

Այսպէսով իմացել են որ լուսինը մեր երկրից հեռու է 358,650 վերստ, իսկ արեգակը՝ 137 միլիոն և 723 հազար վերստ։ Երևակայեցէք թէ լուսինը և արեգակը ինչ ահագին մեծութիւն պիտի ունենան, որ մենք կարողանում ենք տեսնել նրանց։ Այդպէս չափելով իմացել են, որ ամեն մի աստղ մեզանից աւելի հեռու է, քան թէ լուսինն ու արեգակը։ Իմացել են, որ արեգակը մեր երկրից շատ մեծ է, իսկ լուսինը՝ համարեա չորս անգամ փոքր է մեր երկրից։ Կըյուսամ որ դուք հաւատում էք իմ ասածներին. հաւատում էք, որ լուսինը, արեգակը և աստղերը չափուած են և այդպիսով իմացել են, որ աստղերից շատերը անհամեմատ մեծ են արեգակից։ Այդ ամենը չափելու ժամանակ նոյնպէս հեռադիտակն ու եռանկիւնին եղել են չափողների ձեռքում. առանց այդ գործիքների անկարելի էր չափելը։

Նայեցէք աստղազարդ երկնքին. չէք տեսում որ թէ լուսինը, թէ արեգակը և թէ բոլոր աստղերը ազատ են կանգնած և կամ լողում են օդի մէջ։ Այդպէս մեր երկիրը գտնվում է օդի մէջ և ամենայն կողմից շրջապատուած է օդով, ոչ մի բանի վրայ չէ դրուած և ոչ մի բանից չէ կախուած։ Այս զարմանալու բան չէ, քանի որ երկրիցս անհամեմատ մեծ արեգակն ու աստղերն ևս չեն դրուած ոչ մի բանի վրայ, և չեն կախուած ոչ մի բանից։

Արեգակն ու լուսինը երևում են մեզ տափարակ բոլորշի. բայց եթէ հեռադիտակ գործիքով նայենք, կըտեսնենք որ նրանցից ամեն մինը կլոր գնդակաձև է. այնքան ահագին են այդ գունտերը, որ երկրիս երեսին ոչ մի բանի հետ չենք կարող հաւասարել նրանց։ Արեգակից անհամեմատ մեծ գունտեր են աստղերն ևս։ Եթէ երկնքում գտնուած բոլոր լուսաւոր մարմինները, լուսինը, արեգակը և բոլոր աստղերը գնտաձև են, պէտք է կարծենք, որ մեր երկիրն էլ գնտաձև է, որովհետև մեր երկիրն էլ նրանցից մինն է և բացառութիւն չէր կազմելու։ Հեռադիտակի օգնութիւնով միայն կարողանում ենք տեսնել այնպիսի աստղերն ևս, որոնց կարող չէինք տեսնել առանց հեռադիտակի։ Այդ գործիքով տեսնում ենք որ երկնքի անսահման տարածութեան մէջ լողում են անթիւ անհամար գունտեր։ Ինչպէս որ

անսահման է երկնքի տարածութիւնը, այնպէս և անթիւ ու անհամար են նրանում գտնուած աստղերը։

Արեգակը փայլում է, կարծես կրակից է բաղկացած, բայց լուսինը՝ նրա չափ պայծառ չէ փայլում. արեգակին նայելիս, իսկոյն աչքերս նրա լոյսը խտղում է, ծակում է մեր աչքերը և մենք ստիպուած ենք լինում լուսից դարձնել մեր դէմքը, այն ինչ լուսինին կարող ենք ժամերով նայել, մեր աչքերը չեն ծակծկվում. այս ինչի՞ցն է։ Նրանից է, որ լուսինը իրանից լոյս չունի, արեգակն է լուսաւորում նրան. այդ պատճառով էլ նրա լոյսը թոյլ լինելով, չի խտղում մեր աչքերը։ Լուսինը տեսնում ենք գիշերով և ցերեկով. ցերեկն աւելի պակաս է նրա լոյսը, քան թէ գիշերը։ Գիշերները չի երևում մեզ արեգակը, որովհետև գտնվում է մեր երկրի միւս կողմում, բայց այդ կողմից ևս ուղարկում է լուսնին իր լոյսը և լուսաւորում է. ցերեկով լուսնի լոյսը պակաս է երևում մեզ այն պատճառով, որ արեգակն ինքն է գտնվում երկնքում և իր լոյսը անհամեմատ պայծառ լինելով, նսեմացնում է լուսնի լոյսը։ Եթէ ցերեկով ճրագը կամ լապտերը վառէք և դնէք տանը, նրանք այնպէս չեն լուսաւորիլ, ինչպէս գիշերները. դրա պատճառն ևս արեգակն լոյսի պայծառութիւնն է։ Լուսինը ցերեկով արեգակի առաջ այն է՝ ինչ որ է մի մեծ հրդեհի առաջ մի փոքրիկ մոմի լոյսը։

Ասացինք որ լուսինը խաւար է, ինքն իրանից լոյս չունի. այդ կարողացել են ստուգել հեռադիտակով։ Կան խաւար աստղեր ևս, որոնք փայլում են նոյնպէս արեգակի լոյսով։ Եթէ լուսնի վրայից նայելու լինէինք մեր երկրի վրայ, կըտեսնէինք որ մեր երկիրն էլ փայլում է լուսնի և աստղերի պէս, ըստ որում մեր երկիրն ևս լուսաւորվում է արեգակի լոյսով։ Այդ բոլորից կարող ենք եզրակացնել որ մեր երկիրն էլ այն աստղերից մէկն է, որոնց տեսնում ենք երկնքում. սա ևս նրանց պէս մի գունտ է և լուսաւորվում է նրանց պէս։ Բացի այս ասածներից, որից դուք տեսաք թէ մեր երկիրն ևս մի գունտ է, ձեզ կըպատմեմ հիմա ուրիշ փաստեր ևս, որ ձեզ աւելի կըհամոզեն, թէ արդարև մեր երկիրը մի ահագին և խաւար գունտ է։

Երբ մի տափարակ դաշտում շինուած է լինում մի գիւղ և ունենում է իր մէջ մի բարձր եկեղեցի, այդ գիւղը գնալիս, դուք առաջ կըտեսնէք եկեղեցու գագաթը, յետոյ զանգակատան խուչը, յետոյ նրա կտուրը և վերջապէս յատակը։ Եթէ զանգակատան և մեր տեսութեան մէջտեղում գետնի երեսը բարձրացած

լինէր բլրակերպ, հասկանալի կըլլինէր, թէ ինչու մենք հետզհետէ մօտենալով եկեղեցուն, տեսնում ենք աստիճանաբար նրա գագաթից սկսած դէպի ցած՝ մինչև յատակը։ Բայց բանը նրանումն է, որ մեր և պանդակատան մէջ տեղը ոչ մի թումբ, ոչ մի բլրակ չեղած ժամանակն էլ այդ երևոյթն ենք տեսնում ամենատափարակ դաշտի վրայ։ Մի ուրիշ օրինակ։ Նաւը լողում է ջրի վրայ. նրան բաւականին երկար ժամանակ տեսնում են ծովի ափին կանգնած մարդիկ. հետզհետէ նաւն սկսում է ծածկուիլ նայողների տեսութիւնից. դալիս է մի ժամանակ, որ միայն նրա կայմերն ու առագաստներն են երևում, վերջապէս դրանք ևս անհետանում են։ Կարծես թէ նաւն ամբողջապէս ծովի մէջ խրուեց։ Բայց բարձրացէք այդ ժամանակ մի բարձր կտրի վրայ, նոյն նաւը նորից կը տեսնէք. ուրեմն ոչ թէ մեր աչքը նոյն հեռաւորութեան վրայ չէր տեսնում նաւը, այլ չտեսնելու պատճառն ուրիշ բան էր։ Եթէ որ հեռաւորութեան պատճառով չարողանայինք տեսնել, պէտք է որ նաւը գնալով փոքրանար, որ հազիւ նշմարելի լինէր և այդպիսով բոլորովին ծածկուէր, անհետանար մեր աչքից։ Բայց այդպէս չի լինում իրօք, այլ նա գնալով կարծես ցածանում է և նախ յատակն է աներևոյթանում, յետոյ պատերը, ապա առանիքը, վերջապէս առագաստները և ամենից յետոյ կայմի վերին ծայրը։ Բայց հէնց որ բարձրանում ենք մի բարձր շինութեան վրայ և նայում, նորից երևում է նա մեզ։ Այդ նշանակում է նրա և մեր մէջ մի արգելող բան կար, որ չէր թոյլ տալիս տեսնել նրան։ Այդպէս էլ տափարակ դաշտի վրայ շինուած գիւղի և մեր մէջ մի բան արգելում է մեզ հէնց սկզբից տեսնել շէնքերի յատակը, այլ տեսնում ենք առաջ նրանց վերին մասերը և հետզհետէ մօտենալով, ստորին մասերն էլ ենք տեսնում։

Եթէ որ երկիրս տափարակ լինէր, ինչպէս որ տան յատակն է կամ սեղանի երեսը, այն ժամանակ ոչ մի բան չէր արգելիլ մեզ տեսնել նաւը ծովի վրայ և եկեղեցին տափարակ դաշտի վրայ այնպէս՝ ինչպէս վերևն ասացի. այսինքն պէտք է տեսնէինք մինչև այն կէտը, որտեղ կըհասնէր մեր հայեացքը։ Բայց մեր երկիրը սեղանի և տախտակի պէս տափակ չէ, այլ մի գունտ է։ Այդ գունտը իր կորնթարթ մակերևոյթով արգելում է մեր տեսութիւնը. ուր որ էլ կամենաս դնա, միայն թէ տեղդ լինի հարթ և հաւասար, դու կրնկատես միշտ այն ամենը, ինչ որ պատմեցի։ Միշտ կրտեսնես, որ եթէ մօտենում ես առարկային,

նրա վերի մասերից սկսած տեսնում ես աստիճանաբար իջնելով մինչև յատակը. իսկ եթէ հեռանում ես նոյն առարկայից, կամ եթէ դու անշարժ մնում ես և առարկան է քեզնից հեռանում, այդ դէպքում նախ անհետանում է նրա ստորին մասը և աստիճանաբար ու հետզհետէ ծածկվում են քո տեսութիւնից նրա վերին մասերը։

Ուրեմն այս խնդիրը վճռած համարենք. մեր երկիրը գընտաձև է, ինչպէս և լուսինը. նրանից էլ չորս անգամ մեծ է։ Ուրեմն եթէ գունտ է երկիրս, կարելի է պտտել նրա շուրջը։ Եւ իրաւ՝ եթէ մի որոշ տեղից, օրինակի համար Երևանից, սկսենք և յառաջ գնանք միշտ դէպի մի կողմ, դիցուք դէպի արևելք, մի քանի ամիսներից կամ տարուց յետոյ, անշուշտ կրկին կըվերադառնանք Երևան։ Բայց ոչ արևելեան՝ որտեղից դուրս էինք եկել, այլ արևմտեան կողմից։ Այդպիսի փորձեր շատ են արել գիտուն ճանապարհորդները և այդպիսով համոզուել են, որ գունտ է մեր երկիրը։

Մեր երկրի մեծութիւնը գիտունները ճիշդ հաշուել իմացել են. եթէ նրա մէջտեղից մի թել քաշէինք և ծայր ծայրի կապէինք, այդ թելի երկարութիւնը կըլինէր 37,050 վերստ։ Այդ պատճառով ասում ենք, երկրիս շրջագծի երկարութիւնը 37,050 վերստ է։ Եթէ կառքով օրական 200 վերստ ճանապարհ կըտրէինք, այդ արագութիւնով երկրիս շուրջը պտտելու համար, հարկաւոր կըլինէր 185 օր։ Ի հարկէ երկաթուղիով և շոգենաւով մի օրում 200 վերստից աւելի կանցնէինք։ Մոսկվայից մինչև Պետերբուրգ 600 վերստ է. այդ տարածութիւնը արագընթաց երկաթուղիով 15 ժամուայ մէջն ենք անցնում։ Եթէ հողագնտի շուրջ-բոլորը շինուած լինէր այդպիսի ճանապարհ, կարող էինք ողջ երկրագնտի շուրջը պտտել 39 օրուայ և մի քանի ժամուայ մէջ։

Ս. Գ. ԲԷԳ-ՆԱԶԱՐԵԱՆՑ.



ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շատ երգեցէք.—Բժշկական խմբի մը նորերս ըրած քննութիւնները ցուցին որ երգելն առողջութեան շատ օգտակար է։ 222 երգչաց՝ 9—53 տարեկան, կուրծքն քննութեան ենթարկուեցաւ, եւ տեսնուեցաւ որ երգչաց կուրծքն համեմատութեամբ չերդողներուն՝ շատ լայն կ'ըլլայ եւ երդչին հասակին հետ աճումը կը մեծանայ։ Ասով երդչաց կուրծքն աւելի ամուր կ'ըլլայ եւ թոքն առողջագոյն, եւ ասոնք ալ երդչին հասակին հետ կ'աճին։ Երգելն մի միակ առաջարգել դեղն է թոքախտի, մի միակ միջոց կրծոց աճման եւ զօրանալուն. եւ այս կողմանէ մարմնամարզութենէ լաւագոյն է։

«Հ. Ամ.»

—

Պարտիզպանական փորձառութիւնք. — Շատերը վարդասարդի (oléandre) եւ ուրիշ ծառերու վրայ սրճի մրուր (marc de café) կը թափեն կարծելով թէ օգտակար է։ Սակայն սրճի մրուրն ամէն տեսակ ճճիներու բոյն է։ Սրճի մրուրին պարարտութեամբը տունկը՝ թէպէտ ի սկզբան կը պարարտանայ եւ արագ կը զարգանայ, բայց քիչ մը վերջը կը սկսի թոռմիլ եւ շուտով կը փճանայ։ Եթէ սրճի մրուրով պարարտացած տնկի մ'արմատը զննենք, կը գտնենք որ մեծ աւեր գործած են ճճիները։ Վարդասարդը չոր, դեղնագոյն եւ փոքր տերեւներ կ'արձակէ, ծաղիկները կամաց կամաց գեղեցիկ վարդագոյնը կը կորսնցնեն, եւ կոկոնները չեն բացուիր, այլ ոսնեալ եւ չոր կը թափին։

Սրճի մրուրն այն ատեն լաւ պարարտութիւն կ'ըլլայ տնկոց, երբ խառնուած ըլլայ կաւի, աւազի եւ փայտածխոյ փոշւոյ եւ պարոիզի հողի հետ, ուստի եւ իբրեւ համակրական (homéopathique) միայն. ապա թէ ոչ՝ դիւրաւ կը թթուի, եւ ինչպէս ըսինք, ամէն տեսակ ճճեաց թշնամարան կը դառնայ, եւ փոխանակ օգտակար ըլլալու տնկին՝ կ'ըլլայ վնասակար։ Ամէնէն լաւն է եթէ իբրեւ խառնուրդ՝ ուրիշ պարարտութեանց հետ գործածուի, օդոյ, արեւու եւ անձրեւի ազդեցութեան տակ լաւ խմորելէն ետեւ։

«Հ. Ամ.»

—

Կէտ ձկան խաղը. — Ֆրանսական մի փոքրիկ շոգենաւ Նիւ-Ֆաունդլէնդի ափերին մերձ քիչ կանգ առաւ, երբ նրա հետ պատահեց հետեւեալ տարօրինակ արկածն։ Շոգենաւի վրայ մնացել էր նաւապետը եւ խոհարարը. մնացեալ մարդիկ նաւակով գնացել էին ծուկ որսալու։ Ցանկարծ նաւապետը նայեց որ շոգենաւը հողմի արագութեամբ սլանում է յառաջ. ահագին կէտ ծուկը ջանթելով խարիսխը առաջ էր սուրում. սակայն հնարագէտ նաւապետը իսկոյն ելք գտաւ անխուսափելի վտանգից ճողոպրելու. նա կտրեց խարիսխի շղթան, որ կորաւ ջրի տակ կէտի հետ, իսկ ինքն շտապեց Նիւ-Ֆաունդլէնդ նոր խարիսխ գնելու։

ԻՆՔՆՕՐԻՆԱԿ ԼՐԱԳԻՐ.

Ամերիկայի Սուիլվետիր քաղաքում արդէն երկու տարի է ահա լոյս է տեսնում մի ինքնօրինակ լրագիր. դրա անունն է «Բանտի Հայելի», վասնզի խմբագրող և հրատարակողները բանտի մատնուածներն են. բացի սովորական յօդուածներից՝ այդ լրագրում տպվում են և բանտարկեալների կենսագրութիւնը, որ իսկապէս նրանց գործած յանցանքների անկեղծ խոստովանութիւնն է և բացատրում է այն հանգամանքները, որոնց ազդեցութեան տակ նրանք գործել են իրանց մեղքերը: Լրագիրն ունի 300 բաժանորդ տեղական բնակիչներից և 30 բաժանորդ բանտարկեալների միջից:

ԿՐԹՈՒԱԾ ԿԱՊԻԿՆԵՐ.

Մի երկրագործ չորս ամիս վարժեցնելով սովրեցրեց կապիկներին սերմել, հնձել, կասել և այլն. այդ փորձերը սակայն, պէտք է աւելացնենք, նոր չեն. երկու հարիւր տարի առաջ արդէն սովրեցրել էին կապիկներին ջուր կրել, իսկ Չինաստանում վարժեցրել էին նրանց չայ հաւաքել:

ՀԱՆԵԼՈՒԵՆԵՐ

Առաջ. Ա. Ս.

1) Փոքրիկ շունը դռանը պառկած
Դունչն ու պռունգը շուռ է տուած.
Նա չի հաչում և ոչ կծում,
Ոչ օտարին է ներս թողնում։

*
* *

2) Ինքս կոյր եմ, բան չեմ տեսնում,
Լեղու չունիմ, ձայն չեմ հանում.
Մոլորածին կուրախացնեմ,
Ճանապարհին միշտ կուղեկցեմ։

*
* *

3) Այնքան նիհար, հիւանդոտ եմ,
Որ կրշարժեմ մարդու ես դուրթ.
Բայց դլխով հաստ ոսկերոտ եմ,
Ծանրութիւնս կրլինի մի փուրթ։

*
* *

4) Պար եմ գալիս սենեակում
Քուլէքը բրռնած ձեռքում,
Որքան շատ եմ պտրտվում
Այնքան և շատ դիրանում։

*
* *

5) Ամառ ժամանակ հաստ և տաք քուրքում,
Իսկ ձմեռուայ օր՝ ճերմակ սաւառնում։

«Աղբիւրի» անցեալ №№ 8—9-ի մէջ տպուած բեռուսի առաջին վճռողը եղել է օր. Համեստունի Գանջեցեան, Շուշուց. երկրորդ Թիֆլիզից պ. Նապալէօն Տիրացուեան։ Ուրեմն մեր խոստացած մրցանակը, տ. Մարգարիտ Ալէքսանեանի ինքնագիր շքեղ ալբոմը, պիտի ստանայ օր. Հ. Գանջեցեանը, բայց յարգելի օրիորդը այդ թանգագին մրցանակը նուիրում է մեր ազգային հաստատութիւններից մէկին, ուր մենք բարւոք կընամարենք։ Ուստի մենք էլ որոշեցինք ուղարկել Արդուինի Հայոց ուսումնարանին։

Բեռուսի բովանդակութիւնը վեր է առած պ. Ղ. Աղայեանցի բանաստեղծութիւններից եւ այս է ահա՝

Լաւ ի միտ առէք, անվեհերութիւն,
Ահա այս է միակ վսեմ յատկութիւն։

ԲԵԲՈՒՍ

Առաջ. Ա. Սարդարեանի.

Նախընթաց №№-ի մէջ եղած խնդրի, հանելուկի եւ բեռուսի բացատրութիւնները. — $\frac{96}{69}$, Անուանը, Լաւ ի միտ առէք, անվեհերութիւն, ահա այս է միակ վսեմ յատկութիւն։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ